ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ԱՊ/131-2019 ք.Արտաշատ

„21„ 08 2019թ.

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ ԿԱՊԻ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 28-Ի ԹԻՎ 51 ՈՐՈՇՄԱՆ 1-ԻՆ ԿԵՏԻ 1-ԻՆ ԵՆԹԱԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի <<Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին>> թիվ 384-Ն որոշման պահանջները՝

Որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել Արարատի մարզպետի 2015 թվականի հուլիսի 28-ի <<Քաղաքացիական պաշտպանության ծառայություններ ստեղծելու, ծառայության պետեր նշանակելու և Արարատի մարզպետի 2011 թվականի մայիսի 16-ի թիվ 37 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 51 որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը:

2. Ստեղծել Արարատի մարզի կապի և ազդարարման ծառայություն հետևյալ կազմով.

1) Կապի ծառայության պետ - մարզպետի խորհրդական Աշոտ Վարդանյան

2) Կապի ծառայության պետի տեղակալ - մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Վահե Բաղդասարյան

3) Ծառայության անդամներ՝

«Վեոն Արմենիա» ՓԲԸ փորձագետ Արամ Վարդանյան

«Վեոն Արմենիա» ՓԲԸ փորձագետ Ռոբերտ Քոչարյան

«Վեոն Արմենիա» ՓԲԸ առաջատար ճարտարագետ Ալեքսան Մկրտչյան

«Վեոն Արմենիա» ՓԲԸ առաջատար ճարտարագետ Հակոբ Հունանյան

«ՄՏՍ-Հայաստան» ՓԲԸ աշխատանքի անվտանգության գծով ավագ մասնագետ Լևոն Գաբրիելյան

«Յուքոմ» ՍՊԸ Օպերատիվ կառավարման թիմի ղեկավար Էդվարդ Ջաղացպանյան
«Յուքոմ» ՍՊԸ Ֆիզիկական անվտանգության մասնագետ Տիգրան Զալյան
«ՋԻԷՆՍԻ Ալֆա» ՓԲԸ Կենտրոնական տարածքային կենտրոնի առաջատար ճարտարագետ Սերգեյ Խաչատրյան:

3. Ծառայության պետին՝ 1 ամսյա ժամկետում մշակել կապի և ազդարարման ծառայության պլանը և ներկայացնել մարզպետի հաստատմանը:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 21/08/19 16:15:16 GMT+4

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN GARIK 2811870695 Գ. ՍԱՐԳՍՅԱՆ